

ՈՒՐԱՑԻՌ

Սահմաստ Ա. Տ. Հայր-Սուրեն

Յաճկաստանի և Պարսկաստանի սահմանագծին վրայ ջ... զիւզակէն քիչ հեռու անտառի մը մէջ՝ դարանատեղի մը կը փնտռէր իսմայէլ, բարձրահասակ, կարմիրերս թուրք զօրապետ մը. իրեն հեռ էր հայ մը՝ Այսոն:

— Սա դիրքը յարմար չէ, Այսոն. ըստ իսմայէլ յանկարծ կանգ առնելով:

— Դեռ քիչ մը առաջ, էֆէնաի:

Եւ կեցան հաստ կազնիի մը ետեւ. իսմայէլ հրացանը ճամրոն վրայ ուղղած՝ սպասեց: իր մօտիկն էր Այսոնը, աղտոտ զգեստներով, որ աշքերը անբաժան իր մօտի ճանապարհէն՝ պատրաստ էր զօրապետին հարցման պատախանելու: Այդ հայ մարդուկը աղքատութենէ յուսահատած՝ մատնըշութեամբ կ'ուզէր պատուտած զգեստները նորոգել:

Իսմայէլ, արդէն երկու հայ կոյսեր իրեն կնութեան առած՝ կ'ուզէր երրորդ մ'ալ. սակայն այս անզամ իր ուզածը քաջ հայորդի մը կինն էր. պէտք էր նախ այդ հայը սպաննել՝ յետոյ կինը յափըշտակել:

Այսոնը՝ որ արդէն բաւական ատենէ ի վեր մատնըշութեան արհեստին ձեռք զարկած էր՝ այս անզամ հինգ սուկիի պիտի տիրանար, եթէ զօրապետին հրացանին գնտակին դիմաց բերէր քաջ հայորդին:

Վերջապէս երբ ճանապարհին վրայ երևցաւ ձիաւոր մը՝ իսմայէլ հարցուց Այսոնին:

— Այսոն, աս է լուսիկիս էրիկ կոչուածը:

— Այն՝ ատ է, էֆէնաիս, ըստ Այսոն ձեռքերը շիքելով և կամացուկ մը իսմայելի կուրծըր իրեն վահան ըրաւաւ ձիշդ հրացանին դիմացն հասաւ ձիաւորը, որ զինուած էր և անփոյթ՝ աշքերը իր զիւզակին ուղղած՝ անոյշ ծպիտով մը կը բերէր. քիչ ատենէն նա իր լուսիկին և

երկու սիրուն տղաքներուն համբոյրներ պիտի տար:

— Այո, ատ է... կրկնեց Այսոն:

Հրացանը շառաչեց. դժբախտաբար զընտակը վրիպած չէր. մէկ ակնթարթի մէջ վիրաւորեալ ձիէն վար ինկաւ. ձին իբրուեցաւ և իր մօտը տեսնելով տիրոջը թալթելով զիւզակը՝ անշարժ կեցաւ ու զընթութեան նայուածքով դիտեց զայն:

— Այսոն, ձգե՞նք այսաէս:

— Մեր ի՞նչ հոգը, փախչելիս նայինք:

Եւ կոնակնին տուին հոգեվարքի հորն-դիւններով թաւալող դիւկին ու հեռացան, կորսուելով անտառին մէջ, ուր զօրապետը հինգ սումանեան ոսկի համրեց Այսոնի ուրախութենէ դողդլացող ափին մէջ և աւելցուց.

— Այսոն, տասը ոսկի ալ ունիմ երբ յաջողնես լուսիկը ձեռքս ձգել:

— Ինչարհն, վստահ եմ որ մորատիդ պիտի հասնիս:

— Բանի՞ օրէն:

— Պէտք ենք երկու շաբաթ սպասել:

* * *

Իրիկուան մութը իջած էր ջ... զիւզակին վրայ. երդիքներէն երեցող լոյսերը կամաց կամաց կը նուազէին և կամ կը մարէին. քամին ծառերուն տերեններուն հետ կը կատակէր, մինչդեռ մայր մը իր տիսուր սենեկին մէջ սներ հազած՝ աղիոնորմ ողբերով իր նորածինը կ'օրոքէր: Փողիքը ցնացաւ. և զեց տարեկան անշրանիկ որդին՝ պատին վրայ կախուած վեցհարուածեանը դիտելով՝ կը հարցնէր միամորէն իր ողբացող մայրիկին, որուն աշքերը արցոններով կարմրած կին:

— Մայրիկ, մեր հայրիկը ատո՞վ մեռուցին:

— Այո, զաւակս, ատով մեռուցին. և սկսաւ հեղեղօրէն արտասուել:

— Ալ մի՛ լար, անուշ մայրիկ. թողհոտ մնայ այդ, մինչեւ որ կս մեծնամ...

Տղան իր խօսքը կէս թողուց երբ մօրը
այլագունիլը նկատեց, և որ միանգամայն
մատը թերնին տանելով լոել կը հրամայէր։
Կինը ականջը դուրսի խօսակցութեան
ուղղեց և լսեց։

— Ալման, ան է Լուսիկին տռնը։
— Այս՝ աս է։

— Ալմոն, գրպանիս տասը ոսկիները
խաղալ սկսան։ Ինչալլահ թիշ ատենէն ա-
փեր մէջ կը համրուին։

Կինը առանց ականջը դուրսի խօսակ-
ցութեանէն զատելու՝ իսկոյն պատէն վեց-
հարուածեանը փար առա։

— Մայրի՛կ, ինձի՞ տուր այդ...։

Լուսիկ՝ նորէն լոել հրամայեց մատը
թերնին տանելով։

Մութին մէջի երկու անձանօթները շա-
րուածեցին։

— Ի՞նչաէս ներս պիտի մտնենք. Աի-
ման, դիւրին կերպ մը սովորեցուր։

— Երկան բարակ մտածելու ի՞նչ կայ.
պատուհանէն ներս կը մտնենք։

— Եթէ այդպէս՝ դո՛ւն առաջ անցիր։

— Զէ, էքէնտի, դուն առաջ անցիր.
զեղեցիկ դէմքւ, սրմալը զգեստներդ առա-
ջին նայուածքին սիրել պիտի տան զեեզ։

Եւ զօրապիսը Ալմոնին ուսերուն վրայ
ելլելով՝ կրցաւ կէս մէջքը պատուհանէն
ներս անցընել...։

Լուսիկ արդէն իր մեծ որդույն և քնա-
ցող փոքրիկին արտասուախաւան համրոյը-
ներ տուած էր. համրոյը մ'ալ իր էրկանը
վեցհարուածեանին տուաւ. և այդ վայր-
կենին իր մօտ՝ պատուհանէն ներս՝ կա-
խուած տեսնելով օտար կարմրցած դէմ-
քը՝ կայծակի պէս վեցհարուածեանը անոր
գանկին ուղղեց և գնտակով մը անոր ը-
ղեղը տարտղնեց. և վիթխարի մարդը հա-
ռաչանքով և արիւնլուայ՝ պատուհանէն
դուրս ինկաւ։

Կինը մի քանի գնտակ ալ՝ մութին մէջ
փախչող Ալմոնին ուղղեց և անոր փախիկին
գետինը փոռւելու ձայնին պատահեց. տե-
սաւ որ մթոյ մէջ մէկը դեռ կը վագէր։
Մատնիչը վրիպած էր քաջարի կնոջ գլն-
տակներէն։

Երբ զօրապետը վերջին շունչը կը փը-
չէր՝ մերձակայ տաներու մէջ կանթեղի
լոյսերը րարձրացան. մուժ սենեակներու
մէջ լոյսեր վատեցան ու կիներու և մար-
դոց զլուխներ պատուհաններէ դուրս ըն-
կան. ամէնքը կը հարցնէին դիւցազն կը-
նող։

— Խե՞ր է, Լուսիկ, ո՞վ է։

— Թուրք զօրապետ մը. ահա վերջին
շունչը կը փչէ, սատկելու մօտ է։

— Ալ հանգիստ ապրէ. էրկանդ վրէ-
քը լուծեցիր. աստ պէտք է եղած ըլլայ
անոր թշնամին։

— Այդպէս կը կարծեմ. բայց վախեմ
փիզս վտանգի մէջ թողուցի. այս շանը
առաջնորդ Ալմոնը գնտակէս ազատեցաւ։

— Եթէ արդպէս է՝ առ զաւակներդ և
շուտով փախիր. զուն ազատէ ինքզինքդ,
կեանքիդ կարօտ են որրիկներդ. մենք կը-
նանք զմեզ հոգալ։

* * *

Ոիմոնը իր շունչն առաւ իսմայէլի բա-
նակին մէջ Զ... գիւղէն կէս ժամ հեռու.
եղածը մանրամասն պատմեց. զօրին ու
թուրք խուժանը նոյն վայրկենին զինուած
Զ... գիւղին վրայ յարձակցաւ առաջ-
նորդով մատնիչ Ալմոնի, որուն խոս-
տացուած էր տասը օսմանեան ոսկի։

— Կրակ, կրակ. լալով կը զոչէր ժո-
ղովուրդը. և զիշերին մէջ ծուխը բոցե-
րուն հեն կը բարձրանար, և անդին ու-
թիշ աղիողորմ ողբեր. մայր մը իր որդին,
այրը իր կինը կ'ողբային բոցերուն դի-
մաց. Գետինը յօշոտուած և արիւնլուայ
վախեր, գանկեր ջախջախուած և բա-
զուկներ ու զլուխներ կտրտուած։

Ալ զագրիկ էին հրացաններու շառաչ-
ները, մահուան դէմ կռուող կտրիններու
զլուխները ալ չէին լսուեր. Բոցերու մէ-
ջինը կը լուուէին յանկարծ կանացի ձայներ։

— Կ'այրի՛մ...։

— Տունս կ'այրի՛...։

— Նորածինս կ'այրի՛...։

Եւ այս ամէնքն ալ ոչ կը կրկնուէին և
ոչ արձագանգ կը գտնէին ամուշ զիշերին
մէջ:

Բոցերէն քիչ անդին զիակներու պատ-
գարակներէն հոգեվարքի մահանութ հառա-
չանքները. — « Ձաւակս, կի՞նս, հայրե-
նի՞ք» կը խղողուէին փոսերու մէջ, և ա-
մէն հոգի ալ կը դադրէր կեանքէ: Վա-
ղուան արշալոյսը իրենց արիւնթաթախ
զիակներուն և մոխրացած մարմիններուն
զիմաց պիտի արթննար:

*
**

Այրուող զիւղէն քիչ հեռու, անտառի
մը մէջ մայր մը իր ծունկերուն վրայ ա-
ռած երկու զաւակները, հրացանը կողեին՝
կը մրափէր. զիմացը հրդեռուող արշալոյ-
սը՝ իր աշքերը բանալ տուաւ և նա իր
միացող զիւղին զիմաց արտասուեց. նրշ-
մարեց՝ որ հո՞ն ապաստանած էր՝ ուր իր
այրը սպաննուած գտնուեցաւ: Քիչ վերջ՝
իրմէ վար կը հասնէին երկու հոգի զուարթ
և անգութ դէմքերով:

— Ապրի՛ս, Այմոն, ըսաւ զինուորա-
կան մը, և Լուսիկ զայն լսեց:

— Պարտըս էր, տէր:
— Տաննով գոհ պիտի ըլլան:
— Ենորհակալ եմ, ըրածս պարտը
մ' էր:

— Վեհանձն սրտիդ համար տասնեհինգ
ոսկի պիտի համրեմ ափիդ մէջ:

Այմոն ուրախութենէն գրեթէ յիմար-
ցած՝ ծունկի եկաւ. ափերը բացաւ. և զի-
նուորականը սկսաւ ուկիները մատնիշին
ափին մէջ համրել, մէկ, երկու, երեք,
չորս և հինգերորդին՝ զնտակ մ' եկաւ Լու-
սիկէն, ու զինուորականը գետին տապա-
լեց: Այմոն՝ երբ շփոթած՝ չկրցաւ ոչ ա-
ռաջ և ոչ ետ երթալ, ուրիշ զնտակ մ' ալ
եկաւ զինքը գետին թաւալելու:

Կինը գիրկն առած փորթիկը և անդրա-
նիկը առջել ծգած՝ բաջութեամբ մօտե-
ցաւ երկու սատկածներուն: Զօրականը հո-
գին կը փչէր. իսկ Այմոն ոսկիները ձեռ-
քին մէջ սեղմած կը ճչէր:

— Գթութիւն, հայ եմ, քրիստոնեայ
եմ:

— Զէ՛, պիտի զթամ քեզ այն ատեն՝
երր Քրիստոսը ուրանաս:
— Ուրացած եմ արդէն:
— Հաստատո՞ւն ես դաւանանցիդ մէջ:
— Այո՛, զթա:
— Ուրացի՛ր հաւատքդ:
— Ուրացած եմ արդէն, զթա՛:
— Վաս մատնիչ, քեզի այսպէս կը
զթամ. ես վստահ եմ որ անդիի աշխար-
հին մէջ էրկանս երեսը պիտի չտեսնես.
սատկէ հիմու և զնա՛ այրուելու. ապաշ-
խարելու ատեն չտայ քեզ Աստուած. ը-
սաւ Լուսիկ, և ուրիշ զնտակով մը Այմո-
նին ըղեղը տարտղնեց:

Մատնիչը մի քանի վայրկեան տապըլ-
տրկեցաւ և սոկիները ափին մէջ սեղմած՝
հոգին փչեց:

Իսկ արխասիրտ կինը փորթիկ մանու-
կը բազկին վրայ առած և անզրանիկ որ-
դին առջել ծգած՝ զնաց զէպ ի իր մոխիր
դարձած հայրենիթը՝ որ կը ծխար...:

Հ. Մ. Պոտուրնակ

Գ Ի Տ Ա. Կ Ա. Ն

ՈՍՏԻԿՈՒԱՆ ՎԱՐԺԱՐԱԿԱՆԵՐ

Բաւական ապարդիւն խօսակցութիւններ
եղած էին արդէն նիւթիս վրայ, սկսեալ
Եւրոպայէն մինչև Ամերիկա, ուր արդէն
ոճրագործները ի յայտ հանելու համար
բազմաթիւ խելացի միջոցներ կան:

Արդեօք կարելի չէ՞ որ սատիկանները
գիտական վարժարանի մը մէջ կրթուէին,
ոճրագործները ձերբակալելու նոր զէնց
մ' ալ ունենալու համար: Վերջերս տե-
սանց թէ ֆրանսական սատիկանութիւնը՝
շունին կարգ մը յատկութիւններէն օգտուե-
լով (ինչպէս են հաւատարմութիւնը, զօ-
րաւոր հոտառութիւնը, և այլն) զայն իրը
կարենոր գործիչ անդամ մը՝ սատիկաննե-
րու խումբին մէջ դրաւ, ոչ թէ պաշտ-
պանութեան, այլ չարագործները դիւրին